№ 175 Հոկտեմբերի 3 (15) 1880 Հոկտեմբերի 3 (15) № 175

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվա՝ 6 ռուբլ
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են Մխիթարյան Խմբագրատան մէջ:

Ստորագրողներին դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“.

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հարկաւոր կը լինէր:—Ներքին տեսութիւն: Նամակ Լիքսանդրապոլից: Նամակ Դիլիջանից: Նամակ Կէրչից: Նամակ Խմբագրին: Նամակ Խմբագրին:—Արտաքին տեսութիւն: «Լուսոր» լրագրի թղթակցութիւնը: Ֆրանսիա: Զէր օգօրիա: «Մշակի» հեռագիրներ:—Յայտարարութիւններ:

ՀԱՐԿԱՒՈՐ ԿԸ ԼԻՆԷՐ

—

Թէ Ռուսաստանի այլ և այլ հայաբնակ քաղաքներից և թէ Կ. Պոլսից համակրական նամակներ ենք ստանում այն մեր առաջարկութեան առիթով, որ մենք մի քանի ժամանակ սրանից առաջ արեցինք, ասելով որ անհրաժեշտ կը լինէր հրատարակել այժմ ֆրանսերէն լեզուով մի թերթ, որի նպատակը լինէր ծանօթացնել Եւրոպային հայոց ազգի դրութեան, նրա թէ յատկութիւնների, թէ ժամանակից պահանջների հետ, նրա ազգային կեանքի հետ:

Մի քանի տեղերից մեզ առաջարկում են բաւական նշանաւոր գումարներ, որպէս զի մենք ինքներս յանձն առնէինք հրատարակել Թիֆլիսում մի այդ տեսակ ֆրանսերէն թերթ: Մեր ծանօթներից մինը զրում է մեզ մի մեծ քաղաքից, որ այնտեղ մի հարուստ պարոն կայ, որ վաղուց է արդէն դիտաւորութիւն ունէր նուիրել մի խոշոր գումար այդ տեսակ լրագիր հիմնելու համար, բայց որովհետև մինչև այժմ ոչ մի տեղ չէ աջողվել հիմնել ֆրանսերէն լեզուով հայոց օրգան, փողը դեռևս անգործադրելի է մնացել պարոնի ձեռքում:

Կ. Պոլսի մեր բարեկամները դրդում են մեզ ձեռնամուխ լինել այդ տեսակ հրատարակութեան, աչքի առջև ունենալով, մանաւանդ, այն հանգամանքը, որ Կ. Պոլսում հայոց օրգան չէ կարող աջողվել և տեղութիւն ունենալ: Բացի սրանից Թիւրքիայի մայրաքաղաքում հիմնվել է այժմ մի թիւրքաց պաշտօնական լրագիր ֆրանսերէն լեզուով «Օսմանլի» վերնագրով, որի նպատակն է ամեն միջոցներով հայոց ազգի անունը կոտրել Եւրոպայի աչքում:

Այժմ, մանաւանդ, երբ Թիւրքաց կառավարութիւնը արգելել է Հայաստան բառը արտասանել, երբ «Օսմանլի» պաշտօնական թերթը հերքում է, որ աշխարհիս երեսին Հայեր անունով մի ազգ լինէր, —այժմ, ասում ենք, անհրաժեշտ կը լինէր հակացնել Եւրոպային թէ ովքեր են հայերը, ինչ առանձնայատկութիւններ ունի այդ ազգը, ինչ է այդ ազգութեան բնաւորութիւնը, ինչ են նրա ձգտումները:

Հայերի վրա խօսելով թիւրքֆրանսիական թերթը հայերին ազգութիւն չէ անուանում, այլ կոչում է նրանց հայոց համայնք....

Եւ ճշմարիտ, Թիֆլիսը այժմ ամենայարմարաւոր տեղը կը լինէր ֆրանսերէն լեզուով մի հայոց օրգան հրատարակելու:

Բաւական կը լինէր այդ տեսակ թերթ շաբաթը մի անգամ, կամ մինչև իսկ ամիսը երկու անգամ հրատարակելու:

Մենք կրկնում ենք, որ մենք պատրաստ կը լինէինք յանձն առնել այդ տեսակ լրագրի հրատարակութիւնը, եթէ հայ հասարակութեան կողմից նիւթական քիչ թէ շատ օգնութիւն յուսալ կարողանայինք:

Հենց որ կը նկատենք գործի ընթացքից, որ հրատարակութիւնը կարող է աջողվել, մենք իսկոյն խնդրիքով կը դիմենք տեղական կառավարութեանը, որպէս զի մեզ թոյլ տրվի յիշեալ ֆրանսերէն թերթը Թիֆլիսում հիմնելու և մեր խմբագրութեամբ հրատարակելու:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ

—

24 սեպտեմբերի

ԵՒԷ մի ակնարկ ձգենք Ալէքսանդրապոլի վաճառականների վրա, և համեմատենք նրանց այս տարվայ դրութիւնը անցեալ տարվայ դրութեան հետ, կարող ենք դրականապէս ասել, որ նրանք այս տարի ասելի վատ դրութեան մէջ են գտնվում քան թէ անցեալ տարի: Որովհետև անցեալ ձմեռվայ հրէշաւոր թանգութիւնը, տպառելով մեր գիւղացիների նիւթական միջոցը, նրանց այնպիսի դրութեան մէջ ձգեց, որ նրանցից մեծ մասը չուենենալով միջոցներ իրանց հաւար ցանք անելու հարկադրվեցան կիսով ցանք անել: Մեր գաւառում գտնվեցան ամբողջ գիւղեր, որոնք սերմնացու հացաստիներ չունենալով և չը կարողանալով էլ ուրիշից ձեռք բերել, հաւարեա թէ մնացին առանց վար ու ցանքի:

Իսկ կիսով ցանք անող գիւղացին էլ իր արտերը հնձելուց, կալսելուց յետոյ և ստացած արդիւնքը բաժանելուց յետոյ, այլ և իր արած պարտքերը վճարելուց յետոյ, մնացածը նրա ձմրան պէտքերի համար շատ սակաւ է, և գարնան էլ սերմնացու չէ մնում: Այժմ երևակայեցէք, եթէ այսպէս է փոքր ի շատ ցանք ունեցողի դրութիւնը, ապա ինչ կը լինի բոլորովին ցանք չունեցողները....

Իսկ մեր վաճառականների գործը ու առևտուրը, իմ խօսքը գլխաւորապէս մանուֆակտուրայի ապրանքով պարապողների վրա է, ըստ մեծի մասին այս դրութեան մէջ գտնվող գիւղացիների հետ է, որոնք մի կողմ թողնելով իրանց հացագործը և մերկութիւնը, սկսում են հաց ձեռք բերելու միջոցների վրա մտածել....

Որովհետև մեր խօսքը եղաւ վաճառականների վրա, ասելորդ չեմ համարում ընթերցողին ծանօթացնել նրանց մի քանի յատկանիշների հետ:

Այստեղի վաճառականները առհասարակ, շատ ժիր, գործունեայ, խորամանկ և ճարպիկ մարդիկ են Առևտրական լոյսը չը ծագած, նրանք վեր են կենում, վազում են կրպակները, բաց են անում, և այնտեղ թողնելով իրանց որդիներին կամ գործակատարներին, իրանք սկսում են այս և այն կողմը ընկնել, գեղեր որոնել, հարցնել անցորդ գիւղացուն, թէ նրան «ճոմու կտոր» հարկաւոր է, և եթէ գիւղացին յայտնեց, թէ այո, պէտք է «ճոմու կտոր» առնի. մեր վաճառականը բռնում է նրա օձիքից, և կամ կախ ընկելով թեից, այդպէս քարշ տալով բերում է նրան իր կրպակը, աշխատելով, որ իր ձեռք գցած որսը ուրիշները չը յայտնեն.. Այստեղ միմեանց ձեռքից գեղոր խլելու պատճառով շատ անգամ սանձարձակ են լինում.... Դարսում է գիւղացու առաջ նրա ուզած այս ու այն կտորը, և բաւական հարցաքննելուց յետոյ, հազիւ կարողանում է հաւանեցնել գիւղացուն: Ցեսոյ նրանք սկսում են սակարկել: Մեր գիւղացիները լաւ գիտենալով այստեղի վաճառականների իրարու մէջ ունեցած ատելութիւնը և նախանձը, որքան կարող են ապրանքը պակաս են գնահատում, վստահ լինելով, որ եթէ նա դուրս գայ այդ կրպակից և գնայ մէւս վաճառականի մօտ, անշուշտ կարող է իր ուզած գեղով ապրանք գտնել:

Այս տեսակ իրողութիւնը աչքի առջև ունենալով, մեր վաճառականը արդիւնին մի, կամ քառորդ կոպէկ աշխատանքով և գուցէ շատ անգամ էլ վնասով վաճառում է իր ապրանքը:

Իսկ երբ նրանք գործ չեն ունենում, նստում են իրանց կրպակի մօտ, բամբասում են սրան և նրան, երբեմն էլ ընկնում են խոր մտածութեան և մինչև անգամ հալիւցինացիայի մէջ: Այո, նրանք երբեմն երևակայում են այն բախտաւոր ժամանակները, երբ որ գնում էին Թաւրիզ կամ Թիֆլիս, բերում էին ապրանք, և օգտվելով գիւղացու միամտութիւնից, իրանց բերած ապրանքը վաճառում էին նրանց վրա, և մէկին-մէկ փող էին աշխատում:

Մեր վաճառականուհիները փոխանակ իրանց տնտեսական գործերով զբաղվելու, փոխանակ իրանց աղջիկներին և տղաներին կրթելու, աշխատում են այնպէս անել, որ իրանց վրա շատ շատ խօսեն քաղաքի մէջ: Իսկ այդ նպատակին հասնելու համար, հարկաւոր է միտք բարձր շրջանների մէջ ընկնել, հետևել նորաձևութեան, տարին մի քանի անգամ հրաւէր տարքել, և վերջապէս այնպէս շքեղ ապրել, որ ուրիշները միայն իրանցով հետաքրքրվեն:

Մեր վաճառականուհիները շատ և շատ շռայլ են. նրանց շռայլութիւնների մասին մի փոքրիկ գաղափար տալու համար, ասելորդ չեմ համարում նրանց հրաւէրներից մէկը նկարագրել:

Հրաւիրվում են 40 - 50 կանայք, սկսվում է կերուխումը, առաջ են գալիս 9 -10 տեսակ թանգագին շաքարլամներ, 6—7 տեսակ ընտիր քաղցրաւենիք, 4—5 տեսակ նոր և թարմ մրգեր, այսպէս ամեն բան իր կարգին: Հրաւիրուածները բացի իրանց կերած խմածից, տուն գնալու ժամանակը, ամեն մէկը պէտք է իր հետ տանի մատուցրածս երկու ֆունտ շաքարլամա.... Եթէ մի այսպիսի հրաւէրքը մանրամասնաբար հաշուելու լինես 200—300 ռուբլի նստում է մեր վաճառականի վրա:

Մինչդեռ նա բարեգործական նպատակի համար միայն մի քանի կոպէկ զոհելով բաւականանում է: Այդպիսի հրաւէրներում մասնակցողներ լինում են վաճառականների կանայքը միայն, որոնց մէջ առաջին տեղը բռնում են վարժուհիները, որոնք իրանց հառերով ուսումնարանների դաշտից քարոզում են հասարակութեանը հետևում մնալ շռայլութիւններից. մաքուր, բայց հասարակ կերպով հագնվել, ուշադրութիւն դարձնել որդւոց դաստիարակութեան վրա, և այլն:

Պատահում է հրաւէրքի մէջ մի որ և է բարեգործական նպատակով ստորագրութեան թերթ են բացանում և առաջարկում են հրաւիրուածներին ստորագրվել: Ստորագրվողների մէջ լինում են տիկիններ, որոնք մի քանի կոպէկ նուիրելով, իրանց քիթերի տակ մրթմրթում են ասելով. «Այս ինչ է, մեզ բերել են պատուելու, թէ պլպկելու....» Այո, նրանք այդպիսի դէպքերում մրթմրթում են, իսկ երբ որ բանը հասնի մարդ զարմացնելուն, նրանք չեն խնայում մէկ բուբլու տեղ, տասը ծախսել.... Հրաւիրված կանայքը տուն դառնալով պատմում են իրանց մարդկանցը իրանց տեսածը, դեռ մի բան էլ ավելացնում են իրանց ամուսիններին ասելով. «մենք ումից պակաս ենք, եկող շաբաթ պէտք է այնպիսի հրաւէրք սարքենք, որ բոլորին զարմացնենք:» Այսպէս մէկը միւսից օրինակ առնելով, աշխատում են շռայլութեամբ իրար գերազանցել:

Եթէ այսպէս շարունակվի, մի, երկու տարի չանցած Ալէքսանդրապոլի վաճառականներից շատերը բոլորովին կը մնանկանան....

Գ. Բաղրամեանց

ՆԱՄԱԿ ԴԻԼԻՋԱՆԻՑ

—

Սեպտեմբերի 21-ին

Դիլիջանի հայոց հասարակութիւնը հաւաքեց յոգուտ Հայաստանի սովատանջների 53 ռուբլ, որ աչս նուիրատուների ցուցակի հետ միասին ուղարկում եմ ձեզ, խնդրելով բարեհաճէք ստորագրողաց անունները տալել ձեր պատուական լրագրում 'ի մխիթարութիւն, իսկ փողը հասցնել ուր հարկն է:

Ա. Դ. Ռ. 3 ր., Արշակ Սիմէոնեանց 2 ր., Ա-թաբեգ Մէլիքէթեանց 1 ր., Թաչատուր Մատինեանց 1 ր., Իվան Մարտիրոսեանց 1 ր., Ստեփան Գալուստեանց 1 ր., Մկրտիչ Դաւթեանց 1 ր., Վարդեվան Աքոյեանց 1 ր., Մկրտիչ Ցէր-Աբ-

բաշմանից 1 բ., Սերգէյ Տէր-Պողոսեանց 1 բ., Աղէքսանդր Մէլիքեանց 1 բ., Թորոս Գրիգորեանց 1 բ., Александръ Тригуровъ 1 բ., Արբաշատ Ամիրջանով 1 բ., զաքան Մարտիրոսեանց 1 բ., Յակոբ Յարութիւնեանց 1 բ., Մարտիրոս Աբրոյեանց 1 բ., Տէր Նոյի ք. Նոյեանց 1 բ., Բագրատ Ջալալեանց 1 բ., Սամուէլ Արարատեանց 1 բ., Մկրտիչ Նալբանդեանց 1 բ., Բէգլար Մարտիրոսեանց 1 բ., Ալա վերդի Դաւիթեանց 1 բ., Աղէքսանդր Արսէնեանց 1 բ., Պետրոս Գրիգորեանց 1 բ., Աղէքսանդր Անանեանց 1 բ., Պ. Քէջարեանց 1 բ., Ղ. Մ. 6. 50 կ., Ղարաբեանց 50 կ., Մկրտիչ Յարութիւնեանց 50 կ., Գէորգ Տէր-Գէորգեանց 55 կ., Աղէքսան Հարությունեանց 50 կ., Աղաչիկորի Ղարամանեանց 60 կ., Վարթիսի Բաղալեանց 50., Մարտիրոս Յարութիւնեանց 50 կ., Գակովբ Մամիկոնեանց 50 կ., Գէորգի Ամուրեանց 50 կ., Александръ Залдастановъ 50 к., Ե՝ր Զաքարեանց 50 կ., Михаилъ Арзашевъ 50 к., Ներսէս Աղաւերդեանց 50 կ., Յովհաննէս Մխիթարեանց 50 կ., Սաքի Դաւիթեանց 50 կ., Սաչակ Տէր-Մարքարեանց 60 կ., Գէորգ Տէր-Գէորգեանց 50 կ., Սիսակ Բլբիւլեանց 50 կ., Սա՝ տուր Սիմոնով 45 կ., փաշա Արզրուլ Ֆաթ-օղլի 50 կ., Յովհաննէս Վարդանեանց 40 կ., Սարգ՝ ս Սարգսեանց 40 կ., Աւետիս Մատինեանց 40 կ., Յովհաննէս Սարգիսեանց 40 կ., Բէջարի Յակոբեանց 40 կ., Սիմէոն Տէր Աղէքսէկեանց 40 կ., Սերգէյ Պապայեանց 40 կ., Հարությունս Տէր-Յարութիւնեանց 40 կ., Վասգան Դումաշեանց 40 կ., Սրբանդաֆիլ և Թոդոր 30 կ., Նաճարար Թանգատեանց 30 կ., Մահմադ Հաջի Ալի-օղլի 30 կ., Яковъ Петровъ 20 կ., Գրիգոր Թաշաուրեանց 20 կ., Կարապետ Յարութիւնեանց 20 կ., Առոմ Հաջի Բուենեթով 20 կ., Թօնամ 20 կ., Խակ. Պապանիկոլայով 20 կ., Մուխայելով 20 կ., Յ. Արզումանեանց 20 կ., Սողոմոն Բէկնազարեանց 20 կ., Մամադ Բաղր 20 կ., Ստեփան վասապան Բաղդասարեանց 20 կ., Գէորգ Դանիելեանց 10 կ., Խ. Սէֆիեանց 0 կ., Հաշիմ Կաֆար-օղլի 10 կ., Ա. Սկսրլեանց 15 կ., Նազարեթ 15 կ., Յով. Խաչատուրեանց 10 կ., Արթին Մոսկոսեանց 15 կ., Յ. Ա. Անտոնեանց 10 կ., Մարտիրոս Դաղեանց 1 բ. 30 կ., Յակոբ Բոստոմեանց 1 բ., Պ. Յարութիւն Աղաջանեանց 3 բ.: Փոստայի ծախսը հանած զուտ գումար մնում է ընդամենը 53 բ:

Արշակ Սիմէոնեանց

ՆԱՄԱԿ ԿԻՐՉԻՑ

Սեպտեմբերի 16-ին

Կիրչի մէջ հաւաքեցինք յօգուտ Հայաստանի սովեալների 204 բուբլ: Նուիրատուները սրանք են: Յովակիմ Տէրվիշեան 5 բ., Կարապետ Լուսիկեան 15 բ., Սեդրակ Լուսիկեան 5 բ., Պետրոս Պիրեղեան 5 բ., Սարքիս Բաշմանեան 1 բ., Նեղսէս Մեղրիկեան 5 բ., Պօղոս Մեղրիկեան 2 բ. 50 կ., Գէորգ Թազարեան 3 բ., Եղիա Յովակիմեան 5 բ., Յամբարձում Յարութիւնեան 5 բ., Աւետիս Տէր Պողոսեան կաթօղիկ 3 բ., Աւետիս Ուղլեան 2 բ., Յարութիւն Քէլէշեան 1 բ., Յուսէփ Թօքալեան 5 բ., Յարութիւն Թօքալեան 5 բ., Սարքիս Կեսրեան 5 բ., Աբրահամ Ճաֆերեան 10 բ., Յովսէփ Զօրունեան 5 բ., Հաճի Գէորգ Մարքարեան 1 բ., Եղիա Գալաստեան 62 կ., Սարքիս Կարապետեան 5 բ., Մեսրոպ Գուրջեան 3 բ., Յարութիւն Ճուվիլիքեան 2 բ., Խաչիկի Ակ՝ ուստա 2 բ., Օվհաննես Թազարեան 5 բ., Մեսրոպ Ռաֆեան 5 բ., Օվհաննես Վարդվարեան 5 բ., Օվհաննէս Քարիմեան 2 բ., Յակոբ Բէշեան 2 բ., Տրդատ Քասապաշեան 5 բ., Մհակ Թօքալեան 1 բ., Մկրտիչ Մարտիրոսեան կաթօղիկ 3 բ., Մինաս Նաշմիլքեան 3 բ., Սաեղան Արզումանեան 2 բ., Սօրիկա Զէյլի օղլի յոյն 2 բ., Յուսէփ Մաչքալեան 1 բ., Գրիգոր Խաչերեան 1 բ., Աւետիս Մարմարեան 1 բ., Յակոբ Քիւրտեան 5 բ., Յովակիմ Վարդանեան 2 բ., Եսայի Միհասեան 1 բ., Աւետիս Զօպանեան 1 բ., Յարութիւն Փափազեան 3 բ., Վարաք Խաչիկեան 1 բ., Մեսրոպ Փափազեան 2 բ., Յովսէփ Խաչիկեան 1 բ., Յովհաննէս Խաչիկեան 1 բ., Սիրակ Պէքզէմիրեան 1 բ., Հարիկ 1 բ., Խաչիկ Յարալբեան 1 բ., Յակոբ Թաղամեան 1 բ., Գրիգոր Սասունեան 1 բ., Յարութիւն Ներսէսեան 50 կ., Խաչիկ Մալխասեան 1 բ., Սարքիս Զաքարեան 2 բ., Եղիսան յոյն 1 բ., Գլենտ յոյն 1 բ., Աճասան յոյն 1 բ., Դիմիկայ յոյն 70 կ., Պանիկա յոյն 1 բ., Նիկոլայ յոյն 40 կ., Եսրիկայ յոյն 1 բ., Միհրոյ յոյն 50 կ., Նիքոլայ յոյն 50 կ., Կրիկորի յոյն 40 կ., Քոստի յոյն 15 կ., Պանիկայ յոյն 40 կ., Աւետիս սեան 50 կ., Յարութիւն Յակօվրեան 1 բ., Յով հաննէս Աղասեանց 1 բ., Պէտրոս Ճաֆերեան 2 բ., Յարութիւն Էմիքսուչեան 2 բ., Գրիգոր Աբրահամեան 5 բ., Օհաննէս Կոճիկեան 5 բ., Եսայի Տէր Կարապետեան 1 բ., Յարութիւն Քաղեան 1 բ., Կարապետ Քէֆեան 3 բ., Յակօվբ Մերուսեան 1 բ., Կարապետ Տէր Կարապետեան 5 բ., Անդրանիկ 2 բ., 2 կ.: Պողոս Քիւրդեանց 3 բ., Քամարի է 205 բ. 40 կ., որից 1 բ. 40 կ. փոստի ծախսը հանե՛լ մնում է ընդամենը 204 բուբլ:

Յովակիմ Տէրվէլեան

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 30 սեպտեմբերի

«Մշակի» № 167 ներքին լուրերի մէջ տպած էր, որ պ. Խուրովը իր խորթ որդւոյ Բաբանասեանի հետ ներկայացել է ձեզ և գանգատվել է Ներսիսեան դպրոցի վրա յայտնելով թէ վերոյշեալ Բաբանասեանը թողակատու որդեգիր է եղել Ներսիսեան դպրոցում և փոխանակ մաքուր և նոր սպիտակեղէն ունենալու՝ ցնցոտի են երեք ամիս չը լուացած շապկով է դուրս եկել դպրոցից: Այս տեղեկութիւնը հաստատելու համար պ. Խուրովը ցոյց է տուել ձեզ մի զզուելի ցնցոտի փոխանակ մի շապկի:

Սա՛ զարկս տե՛ս. Ներսիսեան դպրոցի և անգամ հոգաբարձութեան պաշտօնապէս յայտնում եմ, որ պ. Խուրովի հաղորդած տեղեկութիւնը մանգամայն սուտ է և զրպարտութիւն:

Աչա՛ իրողութիւնը. Ներսիսեան դպրոցում ամէն մի որդեգիր ունի չորս ձեռք սպիտակեղէն և միշտ շարաթը երկու անգամ բոլորովքեան սպիտակեղէն են փոխում. ուրեմն միանգամայն ան՝ հնարելի է, որ նոցանից մէնք Բաբանասեանը երեք ամիս շարունակ սպիտակեղէն փոխած չը լինի: Ամարանցից որդեգիրները վերադարձել են սեպտեմբերի 3-ին: Վերջին անգամ Բաբանասեանը սպիտակեղէն է փոխել, ինչպէս երեւում է և ցուցակներից, սեպտեմբերի 4-ին և նոյն օրը առաւօտեան՝ որդեգրաց հետ գնացել է բաղանիք իսկ սեպտեմբերի 6-ին նա տունն է գնացել. ուրեմն նրա շապկիը երեք օրվայ փոխած է եղել և ոչ երեք ամսայ: Պէտք է ուշադրել և այն, որ ամարանցում 2½ ամիս շարունակ ես ինքս մի և նոյն սենեակում բնակվել եմ որդեգրաց հետ և այնտեղ ես միշտ շաբաթը երկու անգամ սպիտակեղէն են փոխել որդեգիրները և լուացքը անէն շաբաթ ուղարկվել է քաղաք գրպանոցի լուացարանն և միշտ իր ժամանակին յետ է ստացվել:

Վերաբերութեամբ Բաբանասեանի շապկի ցնցոտի լինելուն, պարտ եմ համարում յայտնել, որ նրա չորս շապկիներից երեքը կարված են 1879-ի յունվարին և մնը 1879-ի սեպտեմբերին: Կարող էր արդեօք այդ ժամանակվայ ընթացքում քարքարվել շապկիը, քանի որ ամէն լուացքին պատռվածները միշտ կարկատվել են: Եթէ նրա շապկիը անպէտք լինէր, մայրիկն նրա համար նորը կարել կը տայինք, ինչպէս մի քանիսների համար արինք: Եւ առհասարակ տարին երեք անգամ յունվարին, մարտին և սեպտեմբերին հարկաւոր եղած նորոգութիւնները միշտ անում ենք, բացի ամէն շաբաթ եղած կարկատաններից:

Զը մոռանամ դիրել և այն, որ Բաբանասեանը երկու տարի որդեգիր էր գրպանոցում և դրեթէ ամէն շաբաթ և ամէն օրերին տուն էր գնում: Այդ ինչպէս է, որ երկու տարուայ ընթացքում ոչ մի անբարեկարգութիւն չէ յայտնել Խուրովը և գժգոհ է միայն այժմ, երբ կանգնաւ հանել իր խորթ որդուն դպրանոցից: Իսկ դպրանոցից Բաբանասեանին հանելու պատճառը այն էր, որ պ. Խուրովը չը հաւանեց «հաղորդելն խիստ զօր տալուն», ինչպէս ինքը յայտնեց հոգաբարձութեանը: Եթէ Բաբանասեանին դպրանոցից հանելու պատճառը շապկի ցնցոտի և անմաքուր լինելն էր, ինչու պ. Խուրովը չը ներկայացրեց նոյն զզուելի ցնցոտին հոգաբարձութեանը և պարզ չը յայտնեց հոգաբարձութեանին այդ մասին: Կարծում ենք, որ այդ աւելի նպատակայարմար կը լինէր:

Պ. խմբագիր, դուք գիտցում էք, որ ձեր ցոյց տուած շապկիը արդարև ցնցոտի էր և զզուելի կերպով: Եւ ընդունում եմ, որ դուք այդպիսի շապկի էք տեսել. բայց արդեօք այն շապկիը դպրանոցից ստացած էր և եթէ այն էր՝ մթէ դիտմամբ պատռատել և կեղտոտել շապկիը պ. Խուրովի նման մարդու համար մի դժուար գործ էր: Այո՛, ես հրապարակաւ յայտնում եմ, որ կամ ձեզ ուրիշ շապկի են ցոյց տուել և կամ դիտմամբ ցնցոտի են դարձրել և կեղտոտել դպրանոցից ըստացած շապկիը:

Ի վերջոյ պ. Խուրովի հաղորդած տեղեկութեան առթիւ ժողովրդի զարմիկը գրպանոցի հոգաբարձութեան դէմ ձեր կողմից անիրաւացի կիրպով գրգռելու մասին ես այսքանս կասեմ, որ դուք շատ հեշտութեամբ կարող էիք ստուգել այդ ինքն ըստ ինքեան անհաւատալի տեղեկութիւնը և այնպէս ապացրել, և ոչ թէ պ. Խուրովի կրքերին բաւականութիւն տալու ծառայեցնէք ձեր թերթը, որով ազատ կը լինէիք այսպիսի չարաշար սխալմունքի մէջ ընկնելուց:

Խնդրեմ այս բացատրութեանս տեղ հնարէք «Մշակի» մօտակայ համարներից մէնում:

Տեսուչ Ներսիսեան դպրանոցի և անդամ հոգաբարձութեան՝ Ար. Նաճարեանեան

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 28 սեպտեմբերի

«Մեղուի» 73 համարը, որ մի էր հայհոյանքներով և երեխայական դատողութիւններով, բոլորովին պատրաստ չէ բերում պ. խմբագրին, որ իր նաճարատական գաղափարներով պատճառ է դառնում ամբոխի մէջ զանազան դժգոհութիւններ տարածելուն և աւելի ամուր պաշտելուն նորա կրօտարերը նախապաշարմունքները: Մի մարդ, որ իր ամբողջ կեանքը նուիրում է մի անօգուտ գաղափարի, նա միշտ անհանգիստ է լինում հոգով. թէպէտ հականալով իր գաղափարի ոչնչութիւնը ստիպատում է հեռացնել իրանից այդ գաղափարը, բայց այդ նրան չէ ազատվում, որովհետև այդ գաղափարը այնպիսի իրոր արմատներ է գցել նորա ուղեղի մէջ, որ դժուար է հեռացնել և նորան փոխարինել նոր և լուսաւոր գաղափարով: Նա այդ ճշմարտութիւնը ըմբռնելով ինքն իրեն ասում է. «Ամուլ ջրից հեռացնես, կոչնչանայ, ուրեմն աւելի լաւ է իմ հին գաղափարս, քան նորը»: Պ. Սիմէոնեանցը թէպէտ լաւ է հասկանում, որ ներկայումս ազգն վնասից աւելի օգուտ չին կարող տալ նորա հին քարոզները, բայց հակառակ իր համոզմունքի դարձեալ նոյն է քարոզում ամբոխին, որովհետև արդէն միանգամից իրոր արմատներ են գցել նորա ուղեղի մէջ հին ազգակործան գաղափարները: Սիմէոնեանց իր բաց նամակով և նաճարատական ֆելիէտոնով, որ ստանաւորի ձեւով էր գրված, իր եռմփտական փտած գաղափարները կ՝ սնում է և տուրկական լինել կամ ժողովրդի խաղաղասիրմունքով լի զուարճութիւն միայն: Ինչ կուզ ասի. նրա պաշտելի, նախապաշարված ծերը շուտով կանցնեն, քան «Մշակին» համախոհ երիտասարդները իրանց թարմ ուժերով: Եղանիութեան դարը անցաւ, այժմ երիտասարդ և նոր ուժերի դար է: Բաւական է վերջապէս հայհոյանքներով և անամօթ հակառակութեամբ բոլորովին զայրացնել զեռ նոր ընթերցաւէր հայ ժողովրդին, զզուեցնել նրան փտած, թթու, ատելի, դժուարամարս կեղտոտութիւններով: «Մշակը» ասում է. հայը ինքնանաչողութիւն և ինքնապաշտպանութիւն պէտք ունենայ, «Մեղուն» ասում է. թող թերագրայ հայերը անինչ կոտորվին քրդերի ձեռքով, բայց զէնք չը վերցնեն. «Մշակը» ասում է լաւ է հայը ազատ լայն լինի քան կրճատով և այդ ճշմարտութիւնը «Մեղուն» հասկանում է, բայց հակառակվում է: Մի ժամանակ, Մակար եպիսկոպոսի օրով «Մեղուն» մեր տգէտ հոգեորականների կոյր պաշտպան էր հանդիսանում, բայց հէնց Մակարը հեռացաւ պաշտօնից, սկսեց հայհոյել հոգեորականներին, իսկ երբ տեսաւ որ դրանով «Մշակին» քաջալերած կը լինի, որ ամենայն հանդգնութեամբ անիմաստ պաշտպանել է իր ուղղութիւնը, սկսեց վերջերումս լեզու փոխել: Եգուց եթէ «Մշակը» ասէ՝ հալածենք մեր հայ աւետարանչաւն և կաթօղիկ եղբայրներին, որոնց առաջնորդների շնորհով հայ աշխարհաբար լեզուն, իսկ վերջինների գրաբար լեզուն մեռելութիւնից կենդանացան - «Մեղուն» անշուշտ կը հակառակի, հայհոյելով և քարոզելով կարդալով Արծրունու գիրքն. «Այդպէս չէ կարելի, դուք տգէտ էք, դուք յետադէմ էք, եղբայրն եղբօրը չը պէտք է հալանի, դա դատանութիւն է, ազգի կործանումն է» և այլն ... Բայց հերիք է ճշմարիտ, բաւական է, գիտենք, որ Սիմէոնեանց «Մշակի» անհաշտ թշնամի է, ինչ կամենայ գրի, նրա ընդացքը ընդունելի չէ, այլ զզուելի ճշմարիտ հայ ընթերցասէրներին. նրա լրագիրը օրական է խաւարասէրների: Մենք խորհուրդ ենք տալիս Սիմէոնեանցին փոխանակ թիֆլիսից, փակվել մի որ և է վանքի մէջ, որտեղ կարող է հեշտութեամբ գտնել բազմաթիւ համախոհներ, իսկ մեր մէջ երբէք չեն ընդունվի նրա քարոզները:

Պատարագիչները ասում են. «Որտեղ էր «Մշակը» երբ «Մեղուն» այս ինչ գործեր էր կատարում». Այո, մի ժամանակ «Մեղուն» միայնակ գործելով զբաղում էր ժողովրդին իր նաճարատական գաղափարներով, բայց երբ «Մշակը» հանդէս գուրս գալով սկսեց նորա խոշոր սխալները ուղղել, զանազան սկսեց զանազան չարախօսութիւններ բարդել «Մշակի» վրա և մոմիսին նրանց զբաղվել: Վեր առնենք, օրինակի համար, «Մեղուի» 73 համարը. չարձէր մինչև անգամ հրատարակել այդ համարը, որովհետև ոչինչ օգուտ չեր բերում չը ներկայացնելով պարունակում էր միայն Արծրունու դէմ ուղղած զանազան հայհոյանքներ և մի կերդ նամակ Աբրահամ Ամիրխանեանց տարագրութեան: Եւ այդպէս են գրեթէ նրա բոլոր համարները: Պարզ է որ «Մեղուի» գոյութիւնը «Մշակիցն» է:

Եթէ «Մեղուն» ընդունակութիւն ունենար որ և է առաջադիմութիւն անել, մենք նրան խորհուրդ կը տայինք թողնել իր նախապէս հեղեղած գաղափարները և ծանօթանալ նոր-լուսաւոր գաղափարների հետ: Այդ է պահանջում ժամանակը, այդ է պահանջում տասն և իններորդ դարը այն մարդուց, որ յանդգնում է ազգի մտաւոր կեանքի առաջնորդ լինել:

Մ. Կիւրեղեանց

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ՐՈԼՈՏԸ» ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

—

Էրզրում՝ «Գ՝ ՈՏՏԸ» լրագրին գրում են սեպտեմբերի 22-ից:

Սարիգ-փաշայի մեծ վիպեր նշանակվելը, որ տեղացիներին յայտնվեցաւ սուլթանից Էրզրում գլխաւոր նահանգապետ Միլեմի Մուստաֆա-փաշային տուած հրամանով, շատ տխուր տպաւորութիւն գործեց բոլոր քրիստոնեաների վրա: Սայիդ-փաշա քրիստոնեաներին յայտնի է Խան-փաշա (օձ-փաշա) անունով, որովհետև մեծ վիպեր եղած ժամանակ մինիստրների խորհուրդի մէջ ասել էր. «ՆԵՌԷ մեր նախորդները այնքան լիմար էին, որ մեզ համար այսքան ցաւեր ստեղծեցին, մենք շատ շատ պէտք է ուշադրենք նրանց սխալը, բոլոր քրիստոնեաներին հանգամից մահմեդական դարձնելով, կամ նրանց բոլորին կոտորելով»

Կ. Պոլսից եկողները պատմում են, որ Սայիդ-փաշայի դէպի քրիստոնեաները ունեցած ատելութեան պատճառով հայոց պատրիարքը բայրամի օրը չը գնաց պալատ սուլթանին շնորհաւորելու համար, որպէս զի Սայիդ-փաշայի մեծութեամբ չը ներկայանալ սուլթանին: Սուլթանի կառապարետները աչա այսպէս է մխիթարում նեղացած քրիստոնեաներին այն բոլորին, որ ներսիսեան քրիստոնեաներին այն բոլորին, որ Եւրոպան նրանց պաշտպան է հանդիսանում

Տեսնելով Թիւրքիայի խաղացած կատակները Եւրոպայի հետ, այսուհետ ամենքը սխալսում են, որ Բերլինի կոնգրեսի ժամանակ Ռուսաստանը համաձայնեց դուրս բերել իր զօրքերը Թիւրքիայի սահմաններից առաջքան թէ Թիւրքիան կատարել էր Բերլին դաշնագրի բոլոր պայմանները:

Աչա մի օրինակ, որից ակներև երևում է, որ Թիւրքիան չէ ցանկանում մի բան սունել հարատաւորութիւնների առաջն առնելու համար: Որովհետև Էրզրումի պոլիցիմէյստերի պաշտօնը ստանալ ցանկացողներից մէկը մի սուտ յայտնութիւն էր արել թէ Էրզրքաղ կառավարութիւնը, Կ. Պոլսից ստացել է հրաման սուլթանի ադիւտանտներից այսուհետ սուլթանի ադիւտանտներից մէկը գոնէ քննելու համար Ռուսաստանին յանձնված էր միայն պոլիցիմէյս-